

Զյուլե

Գր

ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՈՎԵԱՆ

«ԵՍ ՏԻԿԻՆ ՈՒՆԵՄ»...

(Մանկական պատկեր)



891.995
U-66

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆսկայեա փող.

1912

ՀԱՐՄ.
2-545a

ՅՁԻ.ՅՁՄ
Ա-66

2011-07

№ 101 ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹԻՒՆ ԵՂԲԻՐ-ՏԵՐԵՉԻ № 101

ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՈՎԵԱՆ

«ԵՍ ՏԻԿԻՆ ՈՒՆԵՄ»...

(Մանկական պատկեր)

923



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆակայիա փող.

1912

01 AUG 2013

12839

„ԱՂԲԻԻԲԻ“

30-ամեակին


ՆԻԻՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱԿԻՑ-ՀԵՂԻՆԱԿԸ



39776-63

«ԵՍ ՏԻՎԻՆ ՈՒՆԵՄ»...



Ճաշն անցաւ շատ
ուրախ: Եւ ինչեր չը
խօսեցին այսօր ճաշի
վրայ: Հերիքը միթէ
կարող էր հանգիստ
մնալ և չասէր մայրի-
կին, որ նա մի անգամ
էլ կարգայ նամակը:
Ո՛չ. Հերիքը միայն
զսպեց իրան ճաշի վը-
րայ միրգն ուտելիս:

Բայց ինչպէս է
թոթոում Հերիքի սիր-
տը:

Նա շատ անգամ է
ուրախացել, բայց այս-

օրւան ուրախութիւնն ուրիշ է: Եւ ինչպէս չու-
րախանար. նամակը բերում էր նրա համար շատ
նորութիւններ:

Այսօր պատրաստում էին, որ նստեն
ճաշի, յանկարծ զանգահարեցին: Ամենքը զուրս

Թոան: Հերիքը յետ չը մնաց, նոյնպէս վագեց պատշղամբ:

Դուրսը կանգնած էր նամակաբերը: Ամենից առաջ Սուրէնը մօտեցաւ նամակաբերին:

— Տնւր ինձ, տնւր ինձ, — ասաց նա, վերցնելով նամակը:

Եւ այդ նամակն էր, որ Հերիքին ուրախութիւն պատճառեց: Մօրաքոյրը գրում էր.

Ս Ի Ր Ե Լ Ի Բ Ո Յ Ր Մ

«Թէև շատ ուշ, բայց աւելի լաւ է ուշ, քան երբէք... Ուղարկում եմ Հերիքի շապիկները, ուղարկում եմ և տիկինը և ինքնատեղը... Մի ամիս է, որ գնել եմ, բայց ժամանակ չէր լինում, որ ուղարկեմ:

Ասա Հերիքին, որ ինքնատեղը սարքի, տիկինին թէյ տայ. տիկինը ճանապարհից եկած շատ ծարաւած կը լինի:

Մենք բոլորս առողջ ենք և ցանկանում ենք առողջութիւն բոլորիդ. ցանկանում ենք առողջութիւն և Հերիքին: Հոբիսիկը, աղջիկս, Հերիքին տեսել էր երազում, շուտ դարձնել էր և չէր կարողացել համբուրել, շատ ցաւեց: դէ, դու համբուրի՛ր Հերիքին Հոբիսիկի տեղ»:

Բոյրդ Աննա:

* * *

Հերիքը ձեռքը դրել էր թշին և մեծ ուշադրութեամբ լսում էր կարգալուծն:

— Հի, հի, հի... ծիծաղեց Հերիքը, մատը դնելով բերանը, երբ մայրը վերջացրեց նամակը և համբուրեց Հերիքին:

— Այս էլ Հոբիսիկի համբոյրը, — ասաց նա:

» Յանկարծ Հերիքը բարձրացաւ աթոռի վրայ:

— Մայրիկ, մէկ էլ կարդա, մէկ էլ կարդա:

Մայրը մէկ էլ կարդաց նամակը և, երբ վերջացրեց, ասաց.

— Դէ, մէկ էլ պաչեմ:

— Ա՛յ, մայրիկ, այստեղից կարդա՛, այ, այստեղից...

— Էլի կարդամ:

— Հա՛, — կտրուկ կերպով կանչեց Հերիքը:

— «Ուղարկում եմ Հերիքի շապիկները...»

— Չէ՛, չէ՛, մայրիկ, այ այստեղից կարդա՛:

— «Մի ամիս է որ գնել եմ...»

— Չէ՛, այստեղից:

— «Ուղարկում եմ ինքնատեղը և տիկինը...»

— Հա՛, հա՛, այստեղից կարդա՛...»

Եւ Հերիքը այնպէս բարձրացաւ աթոռի վրայից, որ աննկատելի կերպով ձգւեց սեղանի վրայ:

—Ի՞նչ կանես տիկինը,—հարցրեց մայրը, նամակը մի անգամ էլ կարդալուց յետոյ:

Մի՞թէ Հերիքը գիտէ, թէ ինչ կանէ: Ամենից առաջ կը սարքէ ինքնատեղը, կը պատրաստէ թասերը, տիկինին կը նստացնէ այ այսպէս իր կողքին և թէյ կը խմացնէ, շաքար կը տայ... Նա միայն չը գիտէ՝ տիկինը մեծ է, թէ պստիկ: Մի անգամ նրան նւիրեցին մի լաւ տիկնիկ, բայց ուր ընկաւ տիկինը, նա չը գիտէ, մինչև այսօր էլ չը գիտէ: Ո՛չ, այս նոր տիկինը նա չի կորցնի: Հերիքը այժմ պստիկ չէ, հինգ տարեկան է, նա գիտէ ինչպէս պահէ:

—Մայրիկ, երբ կը ստանանք տիկինը:

—Վաղը, վաղը: Այդ պոստի կոչնագիրը դիւր սեղանի վրայ, որ չը կորչի—թէ չէ տիկինը չի գայ: Վաղը կերթանք միասին, կը ստանանք:

Հերիքը դրեց կոչնագիրը սեղանի վրայ և հեռուից սկսեց գիտել, որ եղբայրը չը վերցնէ:

—Սուրէն, ձեռք մի տալ կոչնագրին,—ասում էր նա, երբ տեսնում էր իր մեծ եղբոր Սուրէնի մօտենալը սեղանին:

—Սուրէն, սեղանից հեռու գնա:

Սուրէնը ծիծաղում էր և հանաքով ձեռքը մեկնում կոչնագրին: Հերիքը հասկացաւ, որ եղբայրը կատակ է անում և թողեց նկատողութիւններ անելը:

* *

Եկաւ հայրը. նա ուշացել էր, ուստի մենակ նստեց ճաշելու:

—Հայրիկ, տիկին ունեմ, տիկին ունեմ, ինքնատեղ ունեմ, դու չունես—մօրաքոյրն է՝ ուղարկել...

Եւ Հերիքը ձեռները մեկնեց հօրը, և երբ հայրը մօտեցաւ որ նրան համբուրէ, Հերիքը ձեռներն իջեցրեց, կզակը սեղմեց կրծքին և յետոյ գնաց:

Հերիքը սիրում էր, որ իրան համբուրեն կզակի տակից և այդ ժամանակ նա գլուխը բարձրացնում էր ու ծիծաղում—բայց այս անգամ Հերիքի կամակորութիւնն էր բռնել և հօր մօտ չէր գալի:

—Արի պահեմ,—կանչում էր հայրը:

—Ձէ:

—Արի:

—Ձէ, չէ, չէ, չէ... յետ-յետ քաշեց Հերիքը:

—Ես տիկին ունեմ, ես տիկին ունեմ...

* *

Միւս օրը, առաւօտուայ թէյից յետոյ, Հերիքը մօր և եղբոր հետ գնաց պոստը և առաջին

անգամ տեսաւ, թէ ինչպէս մայրը տւաւ կոչնագիրը, իսկ պոստի մարդը տւաւ նրան մի փաթեթ: Բայց պոստում նրան երկար սպասել տրւին, որովհետեւ շատ մարդ կար այնտեղ:

Երբ նա տուն եկաւ, շտապով գլխարկը գրցեց մահճակալի վրայ և ասաց:

— Ինչքան տեղից ենք գալի. տրամաշյով դնացիք, տրամաշյով եկանք... Ա՛յ, օյ, ինչ շոր է... Եւ նա աջ ձեռքով հովհարեց երեսը. իսկ երբ քանդեցին փաթեթը, նա դիտեց խոր ուշադրութեամբ:

— Շորեր են, մայրիկ, շորեր, — ասում էր նա աչքը չը հեռացնելով փաթեթի միջից հանելիք գոյնգոյն կտորներից, — բայց տիկինը չը կայ... Վայ ինչքան ըմբեր՝ կրուժեալով... ղվ. վայ-վայ... Տուր ինձ. ինչ լաւ կտորներ են. ինքնաեռը, այ, թասը, պնակը, տես չը կտորես, — դիմեց նա եղբորը, — այ, էլի թաս, էլի պնակ, ինչքան, էլի, չորս հինգ... Մայրիկ, մէկ հատ պնակը չը կայ...

— Ա՛յ, տիկինը, — յանկարծ բացականչեց նա, ծափահարելով և շտկւելով աթոռի վրայ, — ինչ լաւն է, ինչ լաւն է: Մայրիկ, մայրիկ, տես, տիկինի ոտները կապած են, բացէք ոտները... Ինչ սիրուն է. տիկինին նայիր, մայրիկ, կապոյտ շորերով, կարմիր գոգնոցով... Ռուս տիկին է... Եղբայրը ծիծաղեց:

— Ո՞ւր է, որ ուս է:

— Ա՛յ, մազերը չես տեսնում, — ասաց Հերիբը, մասնանիշ անելով շէկ մազերը:

* *

Հերիբը նստել էր թախտի վրայ և խաղում էր տիկինով:

Եղբայրը պատուհանի առաջ թղթից աղաւնիներ էր կտրատում:

Երբ եղբայրը բարձրացրեց գլուխը, Հերիբը յարմարեցնելով բոպէն արագ ու ճարպիկ կերպով և ուրախագին ժպտը երեսին օրօրում էր տիկինին և ասում.

— Սուրէն, տես:

Եղբայրը ծիծաղում էր, իսկ այդ միջոցին Հերիբը լի հիացմունքով իջեցնում էր իր աչքերը տիկինի երեսին, կրկին սեղմում կրծքին, կրկին ասում.

— Չեմ տայ. չեմ տայ. դու չունես:

— Բեր կտրենք մազերը, — ասաց Սուրէնը, մեկնելով ձեռքի մկրատը:

— Հա, ինչպէս չէ:

Եւ Հերիբը շատ ամուր սեղմեց տիկինն իր կրծքին: Յետոյ վերջրեց սանրը և սկսեց սանրել տիկինի մազերը: Այդ միջոցին խօհանոցից ներս մտաւ մայրը:

—Օ՛, օ, օ... շապիկը տես, մայրիկ: Թէյ խը-
մացնեմ տիկինիս, կը քնացնեմ:

Եւ Հերիքը նորից ժպտաց, ուրախ-ուրախ
օրօրելով, վեր բարձրացնելով տիկինին. յետոյ
կանգնեց թախտի վրայ, ոտքի մատները վրայ և
տիկինը բարձրացրեց զլիւից վերև:

Նա ուզում է, որ տիկինը երբէք չը տիրէ:

* *
*

Գիշերը Հերիքը պառկեց քնելու, տիկինն էլ
զրեց ծոցում:

Հայրը նստած սեղանի առաջ կարգում էր:

Հերիքը աչքերը գցում էր հօր երեսին,
ձեռքը դնում տիկինի վրայ և կանչում:

— Հայրիկ:

— Ձանիկ:

— Հայրիկ

— Ձանիկ:

— Հայրիկ, հայրիկ, հայրիկ...

— Ձանիկ, ջանիկ, ջանիկ...

— Հայ—ը —ի—կ...

— Ին—չ—է...

— Ես տիկին ունեմ...

Յետոյ նա գրկեց տիկնիկը և նայեց հօրը:

— Քեզ չեմ տան:

— Արի պաշեմ:

— Ես տիկին...


Եւ Հերիքի ձայնը կտրուեց: Նրա սև խուճուճ
մազերը ընկան բարձի վրայ. երեսի արտայայ-
տութիւնը խաղաղ և անմեղ կերպարանք ստա-
ցաւ, թշերը կարմրեցին—միայն աչքերի սևուց-
ներն էին, որ չէին փայլում...

Հայն կոպերը իջնելով թշերի վրայ ծածկել
էին նրանց փայլը:

||



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.





«Ազգային գրադարան»



NL0408466

Հեղինակի մանկական պատմածրները

- 1) «Կեանքի պահանջը», տպւած 1902 թ. «Աղբիւրի» №№ 2—13-ում:
 - 2) «Բանւորի գիրքը», տպւած 1907 թ. «Աղբիւրի» № 5—6-ում:
 - 3) «Լարագոյրի հտեում», տպւած 1908 թ. «Աղբիւրի» № 2—3-ում:
 - 4) «Ծուղրուղու» 1909 թ. «Աղբիւրի» № 7—8-ում և առանձին գրքով (տպաւած) 15 կ.
 - 5) «Դուք ինձ չէք սիրում», տպւած 1909 թ. «Աղբիւրի» № 9-ում:
 - 6) «Պատուհասի առաջ», տպւած 1910 թ. «Աղբիւրի» № 2-ում:
 - 7) «Բէժիսի մարգը» թարգ. Տուրգենևից, տպւած 1911 թ. «Աղբիւրի» № 2-ում:
 - 8) «Փոքրիկ մշակը», տպւած 1911 «Աղբիւրի» № 4-ում:
 - 9) «Ես տիկին ունեմ», տպւած 1912 «Աղբիւրի» № 1-ում և առանձին գրքով—գինը 10 կ.
-